

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 1471-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
11-Ի ԹԻՎ 1471-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի <<Հայաստանի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N 655-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>թիվ 1471-Ն որոշման N 1 հավելվածի.

1. 10-րդ կետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <Լիազոր մարմինն կարող է ստուգել հայտարարություններում նշված տեղեկության հավաստիությունը:>
2. Ձև 3-ը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

Հավելված

ՀՀ կառավարության

<>-----2017թ. թիվ ----որոշման

<Ձև N 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության անվանումը

(անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը,

հայրանունը _____, պետական գրանցման

(հաշվառման) համարը (ֆիզիկական անձի դեպքում չի
լրացվում) _____

Հայտարարումեմ, որ _____

(վարորդի անունը, ազգանունը, անձնագրի սերիան)

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 242-րդ, 243-րդ, 244-րդ, 377-րդ հոդվածներով սահմանված արարքների համար դատապարտված չեմ կամ դատապարտված լինելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դատվածությունս հանված կամ մարված է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 1327-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված հիվանդություններով չեմ տառապում:

Միաժամանակ, սույնով տալիս եմ իմ համաձայնությունը Լիցենզավորող մարմնի կողմից օպերատիվ տեղեկատու քարտադարանից և թմրաբանական բժշկական հաստատություններից իմ մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու համար:

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

_____ 20 թ.

(ամիսը, ամսաթիվը)